

ՍՎԵՒԻԱՅԻ ԲԱՐՔԱՌԻ ԽՏՐՔԵԿԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Կ. ՀԱՆԱՆՅԱՆ

Անվան թիվը բնութագրում է առարկան կամ երևույթը քանակական հատկանիշով, այն առարկայի քանակական դրսևորումն է:

Խտրքեկի խոսվածքում առկա է անվան և անվանաբար գործառող բառերի և բիու թիվ՝ ևզակի և հոգնակի իմաստային հակադրությամբ: Եզակին նշույթավորված չէ, հոգնակին կազմվում է թվանիշ մի շարք ձևույթներով, որոնք գոյություն ունեն հակադրարում՝ իրրև հավաքական մասնիկներ: Որոշ հոգնակերտներ բարբառային նորագոյացություններ են:

Թվանիշ ձևույթներն ավելանում են հիմնականում եզակի ուղղականի հիմքին, առանձին դեպքերում՝ նաև ոչ ուղիղ հիմքերին:

Նկատվում են հնագույն երկակի/ի հետքերը. զույգ առարկա նշանակող անունները ստանում են միայն -վա/ <վի/ թվանիշ վերջավորություն: Այսպես. աշկ/իճվա, ծար/ծիրվա, վրդդ/վրդվա, ազանջ/անզոժվա, անզոժուն/-վուն/, ձունգ/ձրնզվա, անկ/ունկվա (աշք/աշքեր, ձեռք/ձեռքեր, ոտք/ոտքեր, ականջ/ականջներ, ծունկ/ծնկներ, հոնք/հոնքեր) և այլն:

Հիմնական հոգնակերտներն են.

Իր—Հինհայերենյան —եաբ մասնիկն է, որ երկբարբառի պարզեցմամբ միջին հայերենում դարձել էր —եբ (—իեբ արտասանությամբ), որից էլ՝ խոսվածքի —իբ—բ: Գործառում է գերազանցապես միավանկ անունների հետ: Այսպես. դուր/դանդիր, մար/միրիր, բուր/բանիր, պուն/պանիր, կալ/կիրիր, ուրճ/ուրճիր, ծան/ծիրիր, դուլ/դանիր, էուղ/ըղղիր, բուր/բանիր, թէուխտ/թրխտիր, ծոյն/ծինիր, ձուռ/ձառիր, ճծր/ճրրիր, մուլ/մանլիր, կէր/կրրիր (հայր/հայրեր, մայր/մայրեր, կնք/հայր/կնք/հայրեր, գործ/գործեր, գայլ/գայլեր, արջ/արջեր, ձայն/ձայներ, տալ/տալեր, ուղտ/ուղտեր, պատ/պատեր, գիրք/գրքեր, ձյուն/ձյուններ, ծառ/ծառեր, ջուր/ջրեր, մազ/մազեր, գիր/գրեր) և այլն:

Հին և-ով և նախորդող բաղաձայնով հանգող մեկուկես վանկանի անունները վերականգնում են վերջնահանգ և-ն: Այսպես. մանգ/մրգանիր, ծանգ/ծրգանիր, գէտ/գանտիր, պուն/պանտիր, հուրս/հարսներ, պուռ/պրանիր, նակ՝ պրուունծ (մուկ/մկներ, ձուկ/ձկներ, կաթ/կաթեր, բեռ/բեռներ, հարս/հարսներ, բուռ/բուր) և այլն: Վրդդ (ոտ-ն), ծառ (ձեռ-ն), սուռ (դուռ-ն) բառերը, իրրև զույգ առարկաների անուններ, ստանում են -վա (<վի) հոգնակերտ (վրդդ վրդվա, ծառ/ծիրվա, սուռ/սուրվա): Լնու (<լեռն <լեռն) և մուր (<մատն) բառերում առկա են համապատասխանաբար —անկ, —անկ. (հին՝ -ինք, -ունք) հոգնակերտները (լնու/լիռուանկ, մուր/մանրանկ), թեև սրանք կարող են զուգորդվել նաև —իբ-ի հետ՝ առաջացնելով հոգնակիության զուգաձևեր (մուր/մանրանկ/մանրանիր, լնու/լիռուանկ/լնուանիր):

Սակավ դեպքերում կարող է գործառու և-ով հանգող մի քանի բազմավանկ անունների հետ: Այսպես. տրանձէն/տրանձանիր, անկեն/անկեր, տա.

տրորգ/տաստրոգիր, ըսկիսեր/ըսկըսիր, աբբըղուն/աբբըղնիր (գրացի/դրացի ներ, աղջիկ/աղջիկներ, թաշկինակ/թաշկինակներ, սկեսուր/սկեսուրներ, ապարանջան/ապարանջաններ) և այլն:

Նա—Համապատասխանում է հին -անի>նի հավաքական մասնիկին: Ամենակենսունակ հոգնակերտներից է, որը գործառում է երկու և ավելի վանկ ունեցող անունների հետ: Այսպես. ձնղնի/ձնղգրնա, գրրեկ/գրրակնա, պիրուն/պիրըննա, սիրուն/սիրըննա, դի:ֆտուր/դնֆտուննա, ղնլնմ/ղնլնմնա, հիձձուն/հիձձըննա, փիրուդ/փիրդդնա, մրգրուդ/մրգրդդնա, տանըգ/տանգընա, տրկուլ/տրկալնա (ծաղիկ/ծաղիկներ, կրակ/կրակներ, բերան/բերաններ, սեղան/սեղաններ, տետր/տետրեր, մատիտ/մատիտներ, հեծան/հեծաններ, թլունգ/թլունգներ, մկրատ/մկրատներ, դանակ/դանակներ, գզալ/գզալներ) և այլն:

Այս հոգնակերտը ունի գործառության բավականին լայն ոլորտ: Միտում է նկատվում նրա ընդհանրացման՝ բոլոր բաղմավանկ բառերում: Այդ միտումը հիմնավորվում է ախ փաստով, որ այն կարող է հանդես գալ նաև այլ հոգնակերտների ոլորտներում և բւլոր բազմավանկ փոխանունների հետ: Այսպես. գանմթր/գանմթրնա, անղվնր/անղվըրնա, ըրգանկ/ըրգըկնա, հանրէր/հանրըրնա, հագզուր/հագզըրնա, շրկըն/շրկըրննա, կրիլ/կրըրլնա, ուղուդ/ուղուդնա, նրստուձ/նրստըձնա, գաննուձ/գաննըձնա (կարմիր/կարմիրներ, աղվոր/աղվորներ, երկու/երկուներ, հարյուր/հարյուրներ, հագար/հագարներ, տգեղ/տգեղներ, գրբել/գրբելներ, ուտել/ուտելներ, նստած/նստածներ, կանգնած/կանգնածներ) և այլն:

Նիր—Բաղադրյալ հոգնակերտ է, բաղադրված է հին նի+եար>ներ-ից: Գրվում է նվազական, փաղարջական -նգ (> իկ) ածանցով վերջավորվող անունների վրա: Այսպես. խիղնիկ/խիղըննիր, հնծծնից/հնծծըննիր, մըշկնից/մըշկըննիր, մակըգ/մակըրննիր, հնրտնից/հնրտըննիր, փիրնից/փիրըննիր, վըրնից/վըրըննիր, անշկընից/անշկըրննիր (խոտիկ/խոտիկներ, հացիկ/հացիկներ, մըշակիկ/մըշակիկներ. օճառի մաշված, փոքրիկ մնացորդը, մաքիկ/մաքիկներ, հորթուկ/հորթուկներ, փորիկ/փորիկներ, ոտիկ/ոտիկներ, աղջնակ/աղջնակներ)¹ և այլն:

2. Զ. Պետրոսյանը «Գոյականի թվի կարգը հայերենում» աշխատության մեջ հանգամանորեն քննելով նաև միջին հայերենի թվակազմությունը, ուշադրություն է դարձնում նաև այս կարգի կազմությունների վրա: Իրավացիորեն նա նկատում է, որ Ա. Ամասիացու «Անգիտակ անպէտ»-ում միավանկ որոշ բառերի հետ հանդես եկող կ(ր) ածանցական տարրը «ըստ երևույթին ակ//ուկ//իկ նվազափաղարջական մի տարրերակ է»² և եզրակացնում, որ այս կարգի կառույցներում կ(ր)-ի ը-ն հենարան է՝ կանխելու համար բաղաձայնական կուտակումները, այն «գերազանցապես հանդես է գալիս անմիջականորեն բաղաձայնահանգ հիմքավերջի և ներ-ի միջև: Ուստի այստեղ էլ վստահորեն կարելի է ասել, որ՝ քարկըներ և ոչ քարիկներ»³: Նկատենք, որ հենց ինքը՝ հեղինակն էլ ընդունում է կ(ր)-ի ածանցական փաստը և ակ//ուկ//իկ-ի մի տարրերակը լինելը: Ուրեմն, այստեղից էլ պիտի եզրակացվեր, որ համապատասխան հոգնակերտի հավելումով, շեշտափոխության հետևանքով ածանցի ա(ու)ի տարրերը պիտի կա՛մ ընկնեին, կա՛մ էլ հերթագայվեին հայերենի սուղ ը ձայնավորով, որը և գտնում ենք խոսվածքի այս տարրերակներում: Այստեղից էլ՝ ճիշտ է ֆարկներ (խոսվածքում՝ ֆարկներ) և ոչ ֆարկներ ձևը:

Նվազական, փաղարջական անունների հոգնակիի -ներ-ով կազմությունը

¹ Տ. Տեր-Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1967 թ. էջ 39:

² Զ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972 թ., էջ 165:

³ Նույն տեղում:

իր արտահայտությունն ունի գեո գրաբարում: -նեաբ/ (>նեբ>նիր) հոգ- նակերտով ավանդված են բարձրկ-բարձկնեար (սվ. պարծըննիր), նաւակ/ նաւկնեար, քաղաքիկ/քաղքնեար (սվ. -քաղկըննիր)⁴: Խորքեկի խոսվածքը հա- մակարգայնացրել է այն:

Ինչպես ցույց է տալիս Հ. Պետրոսյանն իր աշխատութեան մեջ, հոգնա- կիակազմութեան այս կաղապարը գործուն էր նաև միջին հայերենում:

Վրեա— Բաղադրյալ հոգնակերտ է՝ թվակազմ կրկնակի ձևութներով, որոնցից առաջինն արտացոլում է երկակին, իսկ երկրորդը նա-ն է, որը զու- գորդվում է երկվանկ, որոշ դեպքերում նաև՝ բազմավանկ հիմքերի հետ: Գոր- ծառում է ստացական փոխանունների հետ՝ ընդգրկելով վա-ի գործառական բոլոր ոլորտները: Այսպես. վրդդ/վրդվա/վրդվընա, ղանգ/ղընգվա/ղընգվընա, ձանգ/ձընգվա/ձընգվընա, աշկ/իճվա/իճվընա, անէտմ/անընվա/անընվընա, ծան/ծինվա/ծինվընա (ոտք/ոտքեր/ոտքներ(ը), եղունգ/եղունգներ/եղունգնե- ր(ը), ծունկ/ծնկներ/ծնկներ(ը), աչք/աչքեր/աչքներ(ը), անուն/անուններ/անուն- ներ(ը), ձայն/ձայներ/ձայններ(ը), անուն/անուններ/անուններ(ը)) և այլն:

Վա—Կազմավորվել է հնագույն երկակիի ու (որն առկա է երկ-ու թվակա- նի մեջ) ցուցիչից՝ ու > ի > վի > վա անցումով: Գործառում է հիմնականում զույգ առարկա նշանակող անունների հետ՝ արտացոլելով երկակիի հետքերը: Այսպես. աշկ/իճվա, վրդդ/վրդվա, ծառ/ծիռվա, անկ/ունկվա, ձէձ/ձըձվա, ձըձ- ձիր, սուտ/տըռվա (աչք/աչքեր, ոտք/ոտքեր, ձեռք/ձեռքեր, հոնք/հոնքեր, ծիծ/ ծծեր, դուռ/դռներ) և այլն:

Այս հոգնակերտի հետ զուգորդվում են նաև այնպիսի անունների հիմքեր, որոնք երկակիութեան գաղափար չեն արտահայտում: Երևույթը, թերևս, վա-ի գործառական ոլորտի ընդարձակման միտում է, որը կարելի է բացատրել հա- մաբանութեամբ (հիմնականում՝ միավանկ անուններ) կամ վերջնավանկի ձայ- նավորումով. բառերի այս խումբը վերջնավանկում ունի շեշտակիր երկբարբառ: Այսպես. շուն/շընվա, շըվվա, դէուն/դընվա, դըվվա, անէտմ/անընվա, անըն- վընա (շուն/շներ, տուն/տներ, անուն/անուններ):

Վա-հոգնակերտ են ստանում ծան/ծինվա, ղանգ/ղընգվա, վրդկ/վըրկվա, իշ/իշվա, իշիբ (ձայն/ձայներ, եղունգ/եղունգներ, տակ/տակեր, էշ/էշեր) անունները, որոնք վա-ի ոլորտի գործող որևէ օրինաչափութեամբ դժվար է բա- ցատրել:

Վրդա—Բաղադրված է վր (<վա<վի) և դա (<տի) հոգնակերտներից: Գործառական ոլորտը խիստ սահմանափակ է. ընդգրկում է միայն մերձավոր ազգակցութեան ցույց տվող մի քանի անուններ: Այսպես. քոյր/բուրվրդա, դու/ դպրվրդա, նուր/ նիրվրդա⁵:

Բարբառային նորագոյացութեան է:

Անդա—Բաղադրյալ հոգնակերտ է՝ հին -ան (որն իր նախնական տեսքով էլ մտնում է բաղադրութեան մեջ) և -դա (<տի) ձևութների համադրութեամբ ձևավորված: Բարբառային նորագոյացութեան է: Գործառական ոլորտը սահ- մանափակվում է է, ի ձայնավորում ունեցող միավանկ մի քանի անուններով՝ ծէն/ծիանդա, կիղ/կիղանդա, թէն/թիանդա (ձի/ձիեր, գլուղ/գլուղեր, թի/թիեր): Տեր-Անդրեասյանը նշում է նաև լիսպ/լիսպընդա ձևը, որը մեր միջավայրի և մեր ժամանակների համար անսովոր է:

Վուն—Բաղադրված է վ (<վի>վա) և ուն (<եան>ան>ուն) ձևութներից: Վա (<վի) հոգնակերտը երկակիութեան իմաստն այս կազմութեան մեջ

⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959 թ., էջ 86:

⁵ Տ. Տեր-Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1967 թ., էջ 42:

դեռևս պահպանել է, սակայն՝ մթազնված ձևով, որի շնորհիվ էլ բառն ստացել է երկրորդ հոգնակերտը:

Զուգորդվում է հիմնականում *Ե-ով* հանգող, նաև՝ վերջնավանկում առաջնային շարքի շեշտակիր միավորներով ձայնավորվող բազմավանկ հիմքերի հետ: Այսպես. *իզգիր/իզգորվում*, *նակնոր/նակերվում*, *նիսծոր/նիսծորվում*, *ինգիր/ինգորվում*, *դնննուրկ/դնններկվում*, *քրտիտ/քրտրտվում*, *թիվիրկ/թիվրկվում* (*ևզր/ևզրեր*, *սսկոր/սսկորներ*, *եղջուր/եղջուրներ*, *ընկեր/ընկերներ*, *տանիք/տանիքներ*, *փալաս/փալասներ*, *թև/թևեր*). այս վերջին բառի մեջ առկա են *իռ* (<*եր*)-*կ* (<*բ*)-*վում* հոգնակերտները, ուր առաջին բաղադրիչի հոգնակիության գաղափարը մթազնվել է, թիվիր հիմքը սկսել է գիտակցվել իբրև ելակետային ձև, այնուհետև ավելացել է *կ* (<*բ*)-ն՝ արդեն ոչ իբրև հոգնակերտ, այլ ածանցական մասնիկ՝ առաջացնելով թիվիրկ ձևը: Այսպիսի անցում ունի նաև գնիրնուրկ/գնիրերկվում բառը:

Այս հոգնակերտի հետ են զուգորդվում նաև ազանջ/անգրծվում և ուղիւա/ուղըլվում (ականջ/ականջներ, ուտեիթ. ճաշ/ուտեիթներ) անունները, որոնք նշված օրինաչափություններից դուրս են:

Օրինաչափությունն ընդհանրական չէ, որովհետև այս ոլորտի շատ բառեր ստանում են *թվակազմ* այլ ձևույթներ, ինչպես՝ *անվիլ/անվրլում*, *պննվուր/պննվրում*, *անթոր/անթորնա* (*ավել/ավելներ*, *գամ/գամեր*, *ապուր/ապուրներ*, *խնձոր/խնձորներ*) և այլն:

Դուն—Առաջացել է դա (<*տի*) և ուն (<*ան*>եան) ձևույթների համադրմամբ: Ընդգրկում է առաջնային շարքի ձայնավորում ունեցող երկվանկ անունների ոլորտի մի մասը: Այսպես. *անվիլ/անվրլում*, *անսիղ/անսղում*, *իճէլ/իճըլում*, *անդիլ/անդլում*, *վնրնծ/վնրնծում*, *անէձ/աննձում* (*ավել/ավելներ*, *ասեղ/ասեղներ*, *ոչիլ/ոչիլներ*, *աղեղ/աղեղներ*, *վարոց/վարոցներ*. *գավազան*, *անիծ/անիծներ*) և այլն:

Դա—Հին ուտի>տի ձևույթն է՝ հնչյունական բարբառային համապատասխանությամբ: Գործառական ոլորտը սահմանափակ է. ընդգրկում է —ուն վերջնահանգ ունեցող մի քանի անունների՝ բնուն/բարունդա, չրվում/չրվանդա, հիձ-ձուն/հիձձընդա, տիրծուն/տիրծընդա և ձրգ/ձագդա միավանկ գոյականը:

Ստուն—Համապատասխանում է հին —ստան հավաքական մասնիկին: Բաղադրյալ հոգնակերտ է (*ս-տ-ուն*), ընդգրկում է վերջնավանկում շեշտակիր *ա-ով* ձայնավորվող երկվանկ անունների ոլորտը: Այսպես. *հիկկա/հիկկրստուն*, *իկկա/իկկրստուն*, *ջիշա/ջիշստուն*, *ագոակ/ագոստուն*, *վարդակ/վարդրստուն*, *գրձձակ/գրձձստուն* (*հոգի/հոգիներ*, *այգի/այգիներ*, *ճիճու/ճիճուններ*, *ակոա/ակոաներ*, *վարտիր/վարտիթներ*, *մազ/մազեր*) և այլն:

Ընդգրկում է *կ* (<*բ*) հոգնակերտի գործառության ոլորտի մի մասը: —Ստուն-ի *ս-ն* գրարարյան հոգնակի հայցականի վերջավորությունն է: Այս կարգի բառերում *ս-ն* աստիճանաբար մթազնվել է իր քերականական իմաստը, գիտակցվել է հիմքից անկախ միավոր և միացել է հոգնակերտին՝ *տի>տ>>* (*ստ*): Այնուհետև *ստ-ին* էլ ավելացել է ուն (<*ան*)-ը, և վերջնական արդյունքում ստացվել *ստուն* (<*ստան*) նոր ձևույթը⁶:

Կ—Հին հայերենյան *բ* հոգնակերտն է, որը խոսվածքում կարող է զուգորդվել միայն ձայնավորահանգ անունների հետ: Այսպես. *մաղնա/մաղնակ*, *թիզինա/թիզինակ*, *մակա/մակակ*, *սաղանու/սաղանակ*, *ղրղու/ղրղակ*, *միղէու/միղէակ*, *ջրնգանու/ջրնգանակ*, *խընսում/խընամակ*, *ամմա/ամմակ*, *ընդանա/ընդանակ* (*մատանի/մատանիներ*, *թզենի/թզենիներ*, *մաքի/մաքիներ*, *սատանա/սատանաներ*, *տղա/տղաներ*, *մեղու/մեղուններ*, *ջինգանա/ջինգանաներ*. *բո-*

⁶ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981 թ., էջ 236:

շա, խնամի/խնամիներ, ամմի/ամմիներ. հորեղբայր, բարեկամ/բարեկամներ) և այլն:

Դակ—Բաղադրյալ հոգնակերտ է, համադրված է հին տի (>դա) և փ (>կ) ձևույթներով: Սա ևս գործառնան խիստ սահմանափակ ոլորտ ունի. ընդգրկում է միայն ախպար/ախպրոզակ (եղբայր/եղբայրներ) հասարակ անունը և Ե-ով հանգող մի քանի փոխանուն ածականներ, ինչպես՝ խնչնւր/խնչըրդակ, պունծրը/պանծրոզակ, անդվնւր/անդվըրդակ, մինձ/մինձըրդակ (խոշոր/խոշորներ, բարձր/բարձրներ, աղվոր/աղվորներ, սեծ/մեծեր) և այլն:

Անկ/անկ—Հինհայերենյան -ուն ֆ հոգնակերտն է՝ բարբառային ա<ու, կ<փ համապատասխանությամբ: Առաջնային շարքի ձայնավորում ունեցող բառերում -անկ-ի ա-ն քմայնանում է (քմայնացումն այստեղ ներդաշնակությամբ պայմանավորված երևույթ է): Ուստի անկ/անկ-ը հանդես են գալիս իբրև նույն ձևույթի դիրքային տարբերակներ: Ընդգրկում է հիմնականում զանգվածայնություն, նյութայնություն արտահայտող միավանկ անունների ոլորտը: Այսպես. մուշ/մուշանկ, պուրտ/պրտանկ, ցուրդ/ցըրդանկ, լուր/լուրանկ, ումբ/ամբանկ, խնդ/խիդանկ, ծիտ/ծիտանկ, մէս/մըսանկ, նակ՝ մըսսիր, հնուր/հիդանկ, փաղ/փիդանկ, ցուխ/ցանխանկ (ցեխ/ցեխեր, բուրդ/բըրդեր, ցուրտ/ցրտեր, լեռ/լեռներ, ամպ/ամպեր, խոտ/խոտեր, ձեթ/ձեթեր, միս/մսեր, հոտ/հոտեր, փայտ/փայտեր, ցախ/ցախեր) և այլն:

Այս կարգի անունները հաճախ զուգորդվում են նաև այլ հոգնակերտների հետ՝ առաջացնելով զուգաձևություններ: Այսպես. ճօր՝ճըրանկ, ճըրիր, փաղ/փիդանկ, փիդիր, բուր/բանանկ, բանիր, պուրտ/պրտանկ, պըրտիր, մէս/մըսանկ, մըսսիր և այլն:

Ակ/ակ—Հին -այք հոգնակերտն է՝ բարբառային համապատասխանությամբ: Գրաբարյան փոխառություն է, ընդգրկում է ընդամենը մի քանի բառ՝ մուրտ/մարտակ, գանունդ/գանրնդակ, բանուն/բանունակ, գրանգ/գաննակ (մարդ/մարդիկ, աստիճան/աստիճաններ, պարուն/պարոններ, կին/կանայք):

Մուրտ/մարտակ բառի հոգնակիի վերջնավանկի ա-ն ոչ թե հին -իկ հոգնակերտի -ակ համապատասխանությունն է արտացոլում, այլ կանայք-գաննակ բառի համարանությամբ առաջացած տարր է, այլապես պիտի ունենայինք անք և ոչ թե -ակ, ինչպես կա՝ ծաղիկ/ձնաղնի, շապիկ/շնաղնի և այլն: Հին աչ երկբարբառը համապատասխանում է խոսվածքի ա-ին, որով էլ ունենք՝ ձայն-ժան, գայլ-կալ, եղբայր-ախպար, հորքայր-հուրկըրար և այլն: Այսպես և՛ -այք >ակ:

Դանկ—Գործառում է միայն լրվծանկ/լրվծըրնակ (ավելցուկ) բառում: Դակ-ի դիրքային մի տարբերակ է:

Խոսվածքում առկա է նաև -ընկ ձևույթը, որը գործառում է միայն իբրև հավաքականություն արտահայտող մասնիկ: Նույն իմաստով այն հանդես է գալիս նաև դերանունների հետ: Այսպես. բանրնկ-պապոնք. կնքահայրենք, բանբրնկ-պապիկենք, հարանրնկ-հարսենք, խրնամրնկ-խնամոնք, Հաննրնկ-Հաննեյանները, Աղաջրնկ-Ատաճյանները, Խեյուրնկ-խայրյանները, Հավատրնկ-Հավաթյանները, Բունդրնկ-Պետրոսենք, անրնկ-ասոնք. սրանք, իրրնկ<իրենք<իրեանք և այլն:

Հոգնակի ձևեր չեն կարող ունենալ -ուտեն (-ութին) և -ուտ (էում)-ումն ածանցներով վերացական անունները: Այսպես. գուրդրէում, խրտուում, իրրրէում, խրնդէում, նիշանէում, մինձուտէն, խիվուտէն, խրնդուտէն, խիլանուտէն, անխանդուտէն (կործանում. վախճան, խտում, երերում, խնդում, ուրախություն, նշանում. նշանադրություն, մեծություն, խելություն, խնդություն, ուրախություն, խելացիություն, աղթատություն) և այլն:

Ծղակի/հոգնակի հակադրությունամբ չեն կարող ներկայանալ նաև հատուկ

անոմաները. սրանք միայն անհոգնականներ են: Այսպես. Միլի, Գարնաբիդ, Բուրդուս, Սանրկիս, Սպիտ, Նահաբիդ, Վարտիր, Ագուպ, Միսակ, Միտրակ, Նուրի, Մարտի, Ուսկի, Նարտուշ, Լիա, Միխալ, Մուսի, Տիխծանիգ և այլն:

Անեզականները ամբողջական հարուցույցներով շին ներկայանում, հանդես են գալիս հարացուցային այս կամ այն ձևով: Խոսվածքում առանձնապես տարածված են հին սեռականաձև անեզականները, ինչպես՝ խիլէուծ, մըդէուծ, ծիրուծ, վիդէուծ, ճանդէուծ, միճէուծ, ջամպօյծ և այլն:

Խիստ սահմանափակվել է հինհայերենյան Գ (>կ) հոգնակերտի գործառական ոլորտը (ձայնավորահանգ բազմավանկ հիմքեր), նրանում մթագնվել է հաճախ քանակայնության իմաստը, ստացել է սոսկ ածանցական արժեք, ձուլվել է թվակազմ հիմքին, գիտակցվել իբրև նրա մի տարրը, որի պատճառով էլ բառն ստացել է նոր հոգնակերտ: Այսպես. ձարկ (<ծայր-ք)/ձիրկվա, գուրթուրկ (<կոպ-եր-ք)/գուրթրկվուն, մրոզանկ (<մուզ-ունք)/մրոզընկզուն, փուխկ (<փող-ք)/փուխկիր և այլն:

Թվակազմությունը խոսվածքում տես աղյուսակում:

Խտրբեկի խոսվածքի անվանական թվակազմության քննությունը մեզ հանգեցրել է հետևյալ եզրակացություններին:

1. Թվակազմ ձևույթները հիմքերին կցվող ձևաբանական միավորներ են, որոնք հիմնականում իրենց համապատասխանություններն ունենին հին հայերենի համակարգում, իբրև հավաքական մասնիկներ: Խոսվածքն ընդլայնել է դրանց գործառական ոլորտները և գիտակցել իբրև հիմնական հոգնակերտներ: Հոգնակերտները կցվում են և՛ մաքուր, և՛ հերթագայված հիմքերին:

Թեև ոչ խիստ հետևողականորեն, բայց հիմնականում թվակազմությունը համակարգայնացված է:

2. Թվակազմ հիմքերի և ձևույթների զուգորդելիության հիմնական շափանիշները վանկաքանակությունը, իմաստային ու ձևական հատկանիշներն են: Որոշակի դեր են կատարում նաև հիմքի ձայնավորումները:

Երբեմն կարող են խաշաձևվել երկու հատկանիշներ, որի շնորհիվ էլ առաջանում են հոգնակերտության զուգաձևություններ: Այսպես. իբրև զույգ առարկա նշանակող անուն ձէձ (<ծիծ) բառը ստանում է -վա հոգնակերտ, բայց իբրև միավանկ հիմք ստանում է նաև -իւ: Ստացվում է ձէձ/ձըձվա, ձըձիւր զուգաձևությունը:

Տարբեր օրինաչափությունների խաշափորումների արդյունք են նաև՝ դիրիվ/դիրըվնա, դիրըվզուն, նիշուն/նիշաննա, նիշանդա, իկկա/իկկանկ, իկկըստուն, հիկկա/հիկկանկ/հիկկըստուն, ագոու/ագոակ/ագըրստուն և այլն:

Այլ հոգնակերտների հետ, իբրև ազատ տարբերակներ, հիմնականում հանդես են գալիս մեծ հաճախականություն ունեցողներ՝ իւ, նա, որոնք զուգորդվում են հիմնականում միավանկ և երկվանկ հիմքերի հետ: Սա նշանակում է, որ խոսվածքի թվակազմության մեջ վճռական հատկանիշը վանկաքանակությունն է:

3. Բաղադրյալ ձևույթներում բազմակիության իմաստը արտահայտում են վերջին բաղադրիչները, որոնց կազմում հիմնականում հանդես են գալիս անկախ գործառություն չունեցող, կամ էլ խիստ նվազ հաճախականությամբ հանդես եկող հոգնակերտներ՝ ուն (<ան), դա (<տի), կ (<ֆ): Այսպես. դ-ուն, վ-ուն, ս-տ-ուն, վը-դա, ան-դա, ա-կ, դա-կ, ան-կ:

4. Անհամաչափ է հոգնակերտների գործառական ծանրաբեռնվածությունը: Կիրառման հաճախականության տեսակետից գերակշիռ դիրք են զբաղում իւ, նա, նիւ հոգնակերտները:

Հինհայերենյան Գ-ն (>կ) արդեն հաճախ իբրև հնարանություն է հանդես գալիս: Նրա ոլորտը սահմանափակվել է ձայնավորահանգ բառերով, այս

Թվակազմություն
(Թվակազմ ձևությամբը աղյուսակում տրված են ըստ նվազող հաճախականության)

№	Մզդսւմզհոդհսս	հմտհ	լոմնննոմ	Բաշխման ուղղոսննն ըստ ձևական և իմաստային հատկանիշների			ձգդդրսսն -դոտիսի մսիտմոդս դվոտիտմոստոտոն	ձգդդրսսն դվոտմոստոտոն	ձգդդրսսն դվոտմոստոտոն	Հոդննննն տոսսսսս հիմքեր		Օրինակներ
				դսսսս -սսսսս	դսսսս -սսսսս	դսսսս -սսսսս				մս- թոս	հնր- թոս	
1.	իր	++		++		-			+	+	Հրրր, մսրրր/մսրրրնն մրրրսսն, պրրրնն, հազ- զրրն, աղղղրն	
2.	նա	++							+	+	հաժժրննիր, իրրրննիր իճվրն, անրնվրն	
3.	նիր		+	+	+	+	+	+	+	+	վրրվ, տրրվ, ոննկվ սաղանակ, իկկնկ, հիկկնկ	
4.	վրնա	+	+	+	+	+	+	+	+	+	ցաննկ, մրսաննկ, պրր- տանկ	
5.	վա	+	+	+	+	+	+	+	+	+	ախպրրրակ, միննրրրակ, լվժրրնկ	
6.	կ	+	+	+	+	+	+	+	+	+	տիրժրնր, ձազր վանրժրնն, անղղրնն	
7.	ննկ	+	+	+	+	+	+	+	+	+	թիվրրկուն, ինգրրկուն գրձրստում, ազրստուն	
8.	րակ	-	+	+	+	+	+	+	+	+	թուրրրր, դալրրր գանննկ, մարտակ կիղանր, ծիանր, թիանր	
9.	րա	+	+	+	+	+	+	+	+	+		
10.	րոն	+	+	+	+	+	+	+	+	+		
11.	վոն	+	+	+	+	+	+	+	+	+		
12.	Ստոն	+	+	+	+	+	+	+	+	+		
13.	վրա	+	+	+	+	+	+	+	+	+		
14.	նկ	+	+	+	+	+	+	+	+	+		
15.	ննր	+	+	+	+	+	+	+	+	+		

դիրքում երբեմն ֆ>կ-ին զուգահեռ հանդես են գալիս նաև այլ հոգնակերտներ: Այսպես. հիկկա/հիկկանկ, հիկկըստուն, իկկա/իկկանկ, իկկըստուն և այլն:

5. Առկայացվելիս հոգնակի անունները ևս ենթարկվում են առկայացման հերթագայություններին, որոնց նյութական դրսևորումները ընդհանրական են նաև թվակազմության համակարգում: Հերթագայվում են միայն շեշտակիր վանկարարները, այդ հերթագայությունները շեն առնչվում հոգնակերտ հիմքերի. ձևավորման հնչյունական հերթագայություններին և գործում են դրանցից անկախ: Հոգնակերտության հերթագայություններում երբեմն վերականգնրվում են հիմքերի նախնական ձևերը: Այսպես. դրղու/դրղակ<տղայթ>տրղաթ), սադանու/սադանակ<սատանայթ>սատանաթ, ժէն/ծիանդա<ձի և այլն:

6. Որոշ հոգնակերտներ ձևաբանորեն բազմիմաստ ձևույթներ են: Դրանք հիմնականում հինհայերենյան ֆ հոգնակերտի բարբառային համապատասխանություններն են, որոնք այստեղ հանդես են գալիս իրրև անեզականներ: Այսպես. մէդկ բառի կ-ն միաժամանակ և՛ եզակիի, և՛ ուղղական հոլովածևի ցուցիչ է: Այդպես և՛ աշկ, խիլկ և այլ այս կարգի բառերում: Սրանց թեք ձևերի (սեռական, տրական, բացառական) —էուծ, —այծ, օյծ ձևույթներն ունեն և՛ թվակազմ, և՛ հոլովակազմ արժեք:

Г. К. ГАНАНЫН—Хтрбекский говор сведийского диалекта.—Образование числа в хтрбекском наречии сведийского диалектика обусловлено формально-смысловыми факторами. Форманты числа присоединяются как к чистой основе, так и к основе, подвергшейся чередованию. В наречии наличны параллельные формы множественного числа, являющиеся результатом скрещения различных закономерностей. Некоторые показатели множественного числа морфологически представляют собой многозначные морфемы.